

## Մենք անցել ենք անկման կետը



*Հայաստանում գիտության խնդիրների շուրջ զրուցել ենք ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի հետ*

Պարոն Աշոտյան, 2012-ին գիտությանը հատկացվող գումարը կավելանա 7 %-ով, այս գումարի հաշվին մոտ 7%-ով կբարձրանան աշխատավարձերը, ինչը, սակայն, լուրջ ցուցանիշ չէ: Մինչև այդ «Պահանջում ենք գիտության ֆինանսավորում» նախաձեռնությունը պահանջում էր պետքույզեից ներկայում գիտությանը հատկացվող ՀՆԱ-ի 0,25 տոկոսը 2012-ին հասցնել 1, հաջորդ տարիներին՝ 2-3 տոկոսի, սակայն սայլն այդպես էլ տեղից չշարժվեց: Ստացվում է՝ վարչապետի՝ գիտելիքահենք հասարակության ստեղծման գաղափարը միֆոլոգիայի դաշտի՞ց է:

Շատ սադրիչ և լավ հարց էք տալիս: Եկեք հասկանանք հետևյալը. գիտելիքի կարևորությունը մեր հասարակության մեջ նախևառաջ մտածելակերպային, մենթալիտետային, հոգեբանական խնդիր է: Ցանկացած ոլորտում գումարների ավելացման կարիք միշտ էլ կա՝ սկսած պաշտպանության ոլորտից, վերջացրած սոցիալական ապահովության ոլորտով՝ կրթություն, գիտություն, առողջապահություն: Բոլոր ոլորտներում ամենահեշտ տարբերակն է պահանջել ֆինանսավորման ավելացում: Ինքս հանդիպել եմ նախաձեռնող խմբի որոշ անդամներին: Ընդհանուր առմամբ, ողջունելով իրենց քաղաքացիական ակտիվությունը, անթույլատրելի եմ համարում իրենց պահանջատիրական կեցվածքը, որովհետև բազմաթիվ երիտասարդ գիտնականներ (նաև այդ խմբում ընդգրկված) իմ կողմից ստացել են այլ առաջարկություններ՝ արդյոք խնդիրը միայն ֆինանսների մեջ է: Տարեցտարի մեր հնարավորություններից ելնելով՝ երաշխավորված բյուջետային բարձրացում է տեղի ունենում, այս տարի տասը միլիարդը հատել ենք: Ես իրենց առաջարկել եմ (առաջարկությունս ուժի մեջ է)՝ մտածել, քննադատել, հատկացրած միջոցների ծախսման արդյունավետության հետ կապված առաջարկություն արել: Նրանցից ոչ մեկն իմ առջև չի բարձրացրել գիտական ենթակառուցվածքների բարելավման, օպտիմալացման, բազային ֆինանսավորմամբ հատկացվող բյուջետային միջոցների արդյունավետության խնդիր: Բացի այդ, 10 միլիարդից 7-ը հատկացվում է բազային ֆինանսավորմանը: Առաջարկել եմ՝ տվեք ինձ առաջակությունների քարտեզ՝ ինչպես խոշորացնել, կոնսոլիդացնել Հայաստանի գիտական ենթակառուցվածքները:

**Այսինքն փակե՞լ մի քանի գիտական ինստիտուտներ, օպտիմալացնել:**

Ես չեմ ուզում մենք խոսենք նման տերմիններով, ուզում եմ խոսենք կոնսոլիդացիայի մտքից ելնելով, հավաքենք Հայաստանի լավագույն գիտական միտքը ենթակառուցվածքներով

խոշորացված ինստիտուտների մեջ: Մենք ունենք շուրջ 140 կենտրոն, հիմնարկ, հաստատություն, որը զբաղվում է գիտությամբ: Բազային ֆինանսավորումը «խժռում» է գիտության հատկացվող բյուջեի 2,3-ը: Որքանո՞վ է այդ բազային ֆինանսավորումն արդյունավետ: Եվ կարող եմ ասել, որ արդյունավետության կտրուկ բարձրացման խնդիր կա: Այդ առաջարկությունների փաթեթը մենք ենք մշակում, բայց իրենցից ոչ մեկը չի քննադատում գիտահետազոտական ինստիտուտներում կամ հիմնարկներում տիրող վիճակը, մինչև գիտության հանդեպ ավելի մեծ ուշադրություն պահանջելը: Իրականում ուշադրություն կա, օրինակ՝ ֆիզիկայի ինստիտուտի հետ կապված բարեփոխումների ծրագիրն է իրականացվում: Այո, դժգոհություններ կան, բայց այնուհանդերձ, իրականացվում են: Գիտության բուհական հատվածում նույնպես ավելանում են գիտությանը հատկացվող միջոցները: Փորձում ենք մասնավորի հետ ստեղծել կիրառական գիտության զարգացման հնարավորություն, ինովացիոն տնտեսության տեսլականը: Այսինքն՝ աշխատանք տարվում է:

**Մակայն երիտասարդ գիտնականն այսօր չի ուզում մնալ Հայաստանում, գայթակղիչ չէ այսօր Հայաստանում գիտությամբ զբաղվել, որովհետև գիտի՝ 45.000 դրամ է ստանալու:**

Այդքան չէ, մի քիչ բարձր է, ինչքան հնարավոր է՝ մենք անում ենք: Օրինակ, ֆիզիկայի ինստիտուտին տրվել է առանձին բյուջետային ֆինանսավորում 90 միլիոն դրամ երիտասարդ կադրերի պատրաստման համար: Այսինքն՝ ֆիզիկայի ինստիտուտի համար գիտության երիտասարդացման խնդիրը մենք լուծում ենք այս ծրագրով: Բուհերի բոլոր ռեկտորների առջև հստակ դրվել է ամբիոնների երիտասարդացման խնդիրը: Լավագույներին պահելու խնդիր կա:

Մյուս խնդիրը, որ ասել եմ երիտասարդ գիտնականներին՝ բարձրացրեք գիտության կառավարման խնդիրը: Ի՞նչ է այսօր մեր գիտության ոլորտն իրենից ներկայացնում՝ ճյուղային գիտահետազոտական ինստիտուտներ, հին սովետական դասակարգմամբ բուհական գիտություն, ակադեմիական գիտություն: Դասակարգում, որն ի սկզբանե 21-րդ դարում անախրոնիզմ է: Խորհրդային գիտական համակարգի փոխանցում է տեղի ունեցել անկախ Հայաստանում:

**Ինչո՞ւ մոդեռնացում տեղի չի ունեցել:**

Մոդեռնացումը տեղի է ունենում ոչ կապիտալ մակարդակով: Օրինակ, ֆիզիկայի ինստիտուտի գերատեսչական պատկանելությունը փոխվեց ԿԳ նախարարության, գյուղատնտեսության նախարարության ենթակայության մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ փոխանցվեցին մեր նախարարությանը և միացվեցին ագրարային համալսարան ստեղծելու, ագրոոլորտի կոնսոլիդացման համար: Այս գործընթացը պետք է շարունակվի, և սա պետք է իմ առջև դրվող պահանջը լինի:

**Պարոն Աշոտյան, կառավարությունն արդյոք չի՞ դնում այդ պահանջները, մանավանդ եթե անկեղծ են գիտելիքահենք հասարակություն ձևավորելու մղումները:**

Գիտելիքահենք հասարակությունը նախևառաջ կարիք ունի գիտելիքի արժևորման մեր ուղեղներում, մեր առօրյա կյանքում, մեր հոգեբանության մեջ:

**Դե ասում են՝ մեր ժողովուրդը գիր, գրականություն, գիտելիք սիրող է:**

Ճիշտ են ասում, բայց երբեմն ձեր ասած թեզերը դարձնում են կենցաղային մակարդակի քաղցրահամ բառակապակցություն, և մեր հասարակությունն առհասարակ դրանք չի իրականացնում: Բացի այդ, գիտնականը որպես կանոն ինտելիգենտ է, ինտելիգենտ մարդիկ բանավեճի որոշակի մակարդակ են միշտ պահում, քննադատության մակարդակ են պահում, և ինտելիգենցիայի կողմից քննադատելու մշակույթը մեզ մոտ երբեմն վերածվում է վիրավորախառն տեղեկատվական հոսքի, որը կառուցողական որևէ բանի չի հանգեցնում: Եվ իհարկե շատ լավ կլինի, որ գիտությունը հատկացվող գումարները դառնան ՀՆԱ-ի 3 տոկոսը: Այսօր կրթությունն է 2,6 տոկոս, եթե գիտությունը դառնում է երեք տոկոս, այդ դեպքում ինչքա՞ն պետք է դառնա կրթությունը, պաշտպանությունը, սոցիալական ապահովության ոլորտը, առողջապահությունը: Այսօր գիտությունը ֆինանսավորվում է՝ ա) հիմնականում պետության կողմից, բ) բուհերի կողմից, գ) միջազգային գրանտների կողմից, դ) մասնավորի կողմից (շատ չնչին): Այս բացվածքում կտրուկ ավելացման կարիք կա երրորդ և չորրորդ կետերի. միջազգային, միջազգայնացման շնորհիվ մեր գիտնականներն այսօր կարողանում են գրել, և մասնավոր սեկտորը տնտեսության մեջ պետք է ստեղծի գիտելիքի վրա հիմնված տնտեսական գործունեության պահանջարկ: ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեն հրապարակեց իր հետազոտությունները, որոնցում պարզ դարձավ, որ Հայաստանը մեկ շնչին ընկնող գիտական հրապարակումների թվով, ինչպես նաև ցիտման ինդեքսով առաջատարն է ԱՊՀ երկրների շարքում: Այսինքն, իրականում խնդիրներ կան, բայց սևացնել, քննադատել, պահանջատիրական կեցվածք ընդունել և մտածել միայն նրա մասին, որ ֆինանսական խնդիրներով է միայն հնարավոր կարգավորել իրավճակը, սխալ է:

**Պարոն Աշոտյան, մոտավորապես 500 թեկնածուական և դոկտորական է ամեն տարի պաշտպանվում, արդյոք դրանք մեծ թիվ չէ՞ն մեր երկրի համար:**

Թիվը մեծ չէ իր նումինալ արտահայտմամբ, բայց ինչպիսին է կառուցվածքը: 450 թեկնածության թեզ և շուրջ 50 դոկտորական մի երկրի համար, որ իրականում գիտության կարևորման խնդիր ունի, ավանդույթներ ունի, հիմա քաղաքականություն է վարում գիտության դերի ընդլայնման համար, շատ մեծ չէ: Այլ խնդիր է՝ ինչպես են այդ թեզերը պաշտպանվում: Այստեղ մեծ աշխատանք կա անելու, և դա արվում է շատ ինստեսիվ՝ խստացնելով պաշտպանական գործընթացը, հրապարակումների խնդիրը, խստացնելով ասպիրանտուրա ընդունվելու պայմանները, 13 թվականից մենք միայն iBT ենք ընդունելու: Դոկտոր դառնալու պայմանները կտրուկ բարդացվել են՝ հոդվածների քանակ, աղբյուրներ և այլն:

**Այսինքն՝ այս ցուցանիշն էլ չէ՞նք ունենք:**

Գուցե մի քանի տարի չունենանք, խիստ պայմաններ ենք դնում, բայց հետո նորից պետք է վերադառնանք այս ցուցանիշին: Բացի այդ, պետք է վերանայել կառուցվածքը:

**Փաստացի, ԲՈՂ-ում այսօր խնդիրներ շատ կան:**

Ոչ թե ԲՈՂ-ում խնդիրներ կան, այլ ԲՈՂ-ը շատ խնդիրներ ունի լուծելու և շատ ինտենսիվ լուծվում են այդ խնդիրները: Այս տարվա սկզբից մենք կրճատեցինք գիտական խորհուրդների քանակը, գիտությունը չի կարելի անձնավորել և կոնկրետ մարդկանց տակ ստեղծել ենթակառուցվածքներ: Չորս տնտեսագիտական խորհուրդներից երկուսը թողեցինք: Կրճատեցինք ԲՈՂ-ի կողմից ճանաչվող ամսագրերի քանակը, այս տարի խիստ չափանիշներ են դրվել, որոնք ուժի մեջ կմտնեն տարեվերջից, թե ինչպիսի ստանդարտների

պետք է համապատասխանի ամսագիրը, որ ճանաչվի ԲՈՀ-ի կողմից: Որպեսզի ամսագրերը ճանաչվեն ԲՈՀ-ի կողմից, պետք է ներառված լինեն միջազգային ցիտման համակարգերում (2013 թվականից): Կրճատել են ասպիրանտուրայի տեղերն այն ուղղություններով, որտեղ այդ ծավալի կարիք գիտությունը չունի՝ տնտեսագիտություն, իրավագիտություն, դրա փոխարեն ավելացրել ենք ճշգրիտ՝ ֆիզմաթ գիտություններին, բնագիտական գիտություններին տրվող տեղերը:

**Ինչո՞ւ է, ըստ Ձեզ, մեզ մոտ այդքան գայթակղիչ կոչում ստանալը, կան նաև պաշտոնյաներ, որ այդ կոչումների նկատմամբ անտարբեր չեն:**

Ցանկացած կոչում, եթե լոկ ցուցափեղկ է և ոչ թե սառցաբեկորի գազաթ, շատ արագ մարդկային հարաբերությունների մեջ արժգրկվում է:

**Այսինքն՝ ոչինչ, որ ստանում են, միևնույն է, մի օր պարզ է դառնալու՝ ով ով է:**

Ես չգիտեմ՝ ինչ էք ակնարկում, և խնդրում եմ իմ պատասխաններն ընկալել միայն գիտակրթական համատեքստում: Իմ գիտական ղեկավարը ասում էր՝ թեկնածուականը մի երևույթ է, որ եթե ունես, քեզ ոչինչ չի տալիս, եթե չունես, քեզ բարդույթավորված ես զգում: Այսինքն՝ ակնհայտ է, որ այսօր մենք արդեն կոտրել ենք այդ մոլուցքը, և պայմանները դժվարացրել ենք, խստացրել: Միաժամանակ նաև հասարակության մեջ չի կարող ամեն ինչ շարունակաբար արժեգրկվել, գալիս է մի պահ, երբ այլևս անկման տեղ չկա, և պետք է կամաց-կամաց բարձրանալ վերև: Մենք անցել ենք անկման կետը և վերջին տարիներին փորձում ենք համակարգել որակը և արդյունավետությունն առաջ տանել:

Հուսով ենք, որ 2011-ը կփակենք նախորդ տարիներին ձեռնարկված միջոցառումների արդյունքների արդեն տեսանելի ծիլերով, որոնք փայփայման և հետագա աճի կարիք ունեն:

Սիրանույշ Պապյան